МОСКВА 14 ФЕВ 1876 УТРО

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 5 րուբլ, կէս տարվանը 3 րուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ, Редакція „Мшакъ."

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից 2 կոպէկ։

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի 1876 Թ. նոյն պրօգրամայով և ձևով
Տարեկան գինը 5 րուբլ
Կէս տարվանը 3 „
Բացի խմբագրատանից կարելի է դիմել և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ խանութում։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի, Тифлисъ, редакція „Мшакъ"

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ընդհանուր տեղեկութեանը որ աչքի առջև ունենալով անժամանակ մաքրելը քաղաքիս գանձարանի մէջ գնահատական հարկի, կազմված են ցուցակներ բոլոր բնակիչների կայքերի, որոնց վրա ապառիկներ են հաշւում մինչև հարկից և հաղորդված են Թիֆլիսի Եռագ Պոլիցէյմէյստերին, որպէս զի գործ դնել օրէնքը Քաղաքային կանօնադրութեան 4 п. 131 ст. հիման վրա, որի զօրութեամբ ապառիկը պահանջվում է կալանաւորելով հարկատու անշարժ կալուածքի արդիւնքները։ Եթէ այդ միջոցը անբաւականացուցիչ լինի, այն ժամանակ պիտի ծախվի շարժական կայքը, իսկ եթէ այնուհետև ապառիկը չի ծածկվի, կը ծախվի և անշարժ կայքը, այն կարգով, որը օրէնքով սահմանված է քաղաքային կայքերից յօգուտ կառավարութեան հարկ պահանջելու համար։ Սորա հետ վարչութիւնը նախազգուշացնում է ամենքին, ում վրա ապառիկների ամենափոքր քանակութիւն կայ, որ նրանց անունները կը հրատարակվին բոլոր տեղական լրագիրներում,—եթէ չը հոգան անյապաղ վճարել այն ապառիկները։

1 (3)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կղերական ոգի.—Ներքին տեսութիւն. Բամբակացանութիւնը Երևանի նահանգում. Թիֆլիսում միօրական ժողովրդագրութիւն կատարելու համար թելադրութիւնը. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրին. Նոր լուրեր.—Արտաքին տեսութիւն. Թիւրքիա. Նամակ Փարիզից. Նամակ Գերմանիայից. Նամակ Պարսկաստանից.—Խառն լուրեր.—Յայտարարութիւններ.

ԿՂԵՐԱԿԱՆ ՈԳԻ

Կղերական ուղղութեան, կղերական վարդապետութեան գլխաւոր հիմունքը այս է՝ անսահման, անպայման հնազանդութիւն, կոյր հպատակութիւն հեղինակութեան, իրանից բարձր իշխանութեան, հրամանի առջև։ Ազատ, անհատական քննադատութիւնը, կրիտիկը՝ մահացու մեղք է համարվում ամեն երկրի կղերական կուսակցութեան մէջ։

Այս գլխաւոր, բթացնող, ճնշող, կուսակցութեան կապերը պինդ պահող սկզբն է որ տիրապետում է կղերականների բոլոր հիմնարկութիւնների մէջ՝ եկեղեցական պաշտօնական երարխիայի, վանքական միաբանութեան, ուսումնարանի մէջ...

Բայց մի և նոյն ժամանակ կայ կղերական կուսակցութեան մէջ մի ուրիշ, ոչ պակաս նշանաւոր սկզբունք, որ նոյնպէս յատկանիշ է այդ մութ վարդապետութեան համար՝ այդ հնաւեալ պրինցիպն է՝ նպատակը արդարացնում է միջոցները...

Անպայման, կոյր հնազանդութեան սկզբունքը իրանց աչքի առջև որպէս ուղեցոյց ունենալով, կղերականները ուրիշ պէտք է ամենահնազանդ հպատակողներ լինէին հաստատված օրէնքների, իշխանութեան, հեղինակութեան։

Այո, այդպէս էլ է։ Բայց որովհետև նպատակը արդարացնում է միջոցները, ուրիշ հարկաւոր ժամանակ մենք տեսնում ենք մարդկային պատմութեան մէջ, որ նոյն հպատակող և ամեն հեղինակութեան հնազանդող կղերականութիւնը օգնութեան ձեռք է մեկնում ապստամբութեան, անհնազանդութեան... Այդ մենք տեսել ենք Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվէյցարիայում, Սպանիայում և ուրիշ շատ երկիրներում...

Կղերականների վարդապետութեան, նրանց ոգու գլխաւոր, հիմնական սկիզբը պահանջում է կոյր, անպայման հնազանդութիւն իրանց եկեղեցապետական բարձր իշխանութեան առջև։ Բայց եթէ հարկաւոր է, եթէ հանգամանքները պահանջում են անհնազանդ լինել,—այն ժամանակ կեցցէ՛ միւս սկզբունքը՝ նպատակը արդարացնում է միջոցները...

Հռօմի պապին, կաթօլիկ եկեղեցապետական իշխանութեան գլխաւոր ներկայացուցչին դիպչիլ մահացու, աններելի յանցանք է, նրա [illegible] նութեան ենթարկել՝ նշանակում է մատնիչ լինել ազգի և եկեղեցու... նշանակում է կորցնել եկեղեցու պաշտօնական հեղինակութեան անունը...

Բայց եթէ Հռօմի պապը ուզենայ դիպչել փոխել Իտալիայի մի գաւառի անպիտան, ծոյլ, անշնորհք, վնասակար, անբարոյական, ներգաւոր, ազէտ մի եպիսկոպոս և նրա տեղը ուրիշին նշանակել, բայց այդ առաջինը փոխելով կղերական կուսակցութիւնը կորցնում է իր ուժը, ընկնում է, զրկվում է իր առաջնորդից, որովհետև յիշեալ եպիսկոպոսն էր յիշեալ գաւառի մէջ կղերական կուսակցութեան պաշտպանողը,—այն ժամանակ ի՞նչ անէ կուսակցութիւնը՝ այն ժամանակ՝ նպատակը արդարացնում է միջոցները...

Եւ նոյն կղերական կուսակցութիւնը, որ քանի մի օր առաջ ազգի և եկեղեցու համար վնասակար էր յայտնում այն մարդուն, որ համարձակվում էր քննադատել հոգևորականութեան և եկեղեցու գլխաւոր ներկայացուցչի պապի գործունէութիւնը,—այժմ իր գաւառի մէջ իր եպիսկոպոսին պահելու համար, որին որպէս կղերականութեան առաջնորդին նրանից խլել են ուզում,—պատրաստ է ոչ թէ միայն քննադատել, բայց և ամեն ջանք է գործ դնում հոգևորականութեան և եկեղեցու գլխաւոր ներկայացուցչի, պապի անունը կոտրել, վար գցել հասարակութեան աչքի առջև նրա նշանակութիւնը։

Ինչ արած... այդպէս հարկաւոր էր... Հլու, անպայման հնազանդութեան, կոյր հպատակութեան սկիզբը տեղ տուեց, հանգամանքներին նայելով, ուրիշ ոչ պակաս զօրեղ սկզբին՝ նպատակը արդարացնում է միջոցները։

Եւ այդպէս է գործում կղերական կուսակցութիւնը ոչ թէ միայն Իտալիայում և Գերմանիայում, բայց և ամեն երկրում...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՄԲԱԿԱՑԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Անցեալ յօդւածումս (Մշակ № 51,1875) ես գրեթէ ոչինչ չը խօսեցայ բամբակ ցանելու մասին. այժմ ես ուզում եմ վերադառնալ այդ կէտին և մի հաշւեցուցութիւն տալ ընթերցողին թէ ինչպէս են ցանում բամբակը Երևանի նահանգում, թէ քանի տեսակ բամբակ կայ և թէ որքան է այն քանակութիւնը որ արտադրւում է մեր գաւառը։

Յայտնի է որ բամբակի բոյսը պատկանում է տաք կլիմային, նա սիրում է պարարտ, կաւուտ և սև հող. բարեբաղդաբար մեր գաւառը գտնվում վարձատրված է բնութիւնից։

Աշնան, իսկ շատ տեղ գարնան սկզբից հերկում են այն հողը, որ նշանակված է բամբակի ցանքի համար, և երբ արդէն պատրաստ է, ձեռնարկում են բամբակ ցանելուն, որ լինում է ապրիլի վերջի կէսից մինչ մայիսի սկիզբները։ Ցանելուց մի օր առաջ բամբակի սերմը թրջում են խառնելով հետը հող, այն նպատակով, որպէս զի սերմի վրայ կպած բամբակի թելերը բաժանուեն և մաքուր սերմը։

Այստեղ միզանում դեռ սովորութիւն չը կայ բամբակի սերմը հատ հատ տնկել, թէև այդ կը պահանջէր բաւականին մեծ աշխատութիւն, այլ ցանո[illegible] բամբակ ցանքին և գարին...

[illegible] լինում է այն, որ սերմերը ընկնելով հողի մէջ խառն և անհաւասարապէս հեռու միմեանցից, այդպիսով բոյսը չէ մեծանում, չէ զարգանում ինչպէս հարկն է, և հաւանական է, նոքա լինելով իրար շատ մօտիկ, խլում են մէկը միւսից այն սնունդը, որ անհրաժեշտ էր միւսին աւելի աճելուն և արդիւնաւոր կացուցանելու։

Ցանելով չէ վերջանում ամեն բան. բամբակի հողն պահանջում է դեռ այլ աշխատութիւններ մինչև հասնելը. ցանելուց յետոյ պէտք է տափարակել հողն առաջին անգամ ջրելէն 5—6 օր անցած։

Երբ բամբակի բողբոջը բարձրացել է փոքր ինչ, քաղհանը սկսում են. քաղհան ասվում է այն գործողութիւնը, որ անում են աւելորդ և անպիտան խոտերը դուրս հանելու համար, որով հողը մաքրվում է. այդ գործողութիւնը կրկնվում է ամբողջ պլանտացիայի ժամանակ 2—3 անգամ։

Ջրել հարկաւոր է եթէ պարարտ հող է 3 անգամ, թէ ոչ 6—7 անգամ. նոյն իսկ բոյսը մաստանիշ է լինում այս դէպքում. նորա տերևները մաւթ գոյն են ստանում, որ նշան է թէ ծարաւ է նա։ Բամբակը ծաղկում է օգոստոսի սկիզբներին։

Եւ ի՜ն պարզ առաւօտեան ժամանակ օգոստոսի, երբ բացւած են բամբակի ծաղիկները, մի գեղեցիկ տպաւորութիւն է զգում մարդս երբ գտնվում է բամբակի դաշտում,—ամբողջ դաշտը պարզվում է նորա աչքին զարդարված գոյնզգոյն ծաղիկներով։

Բամբակի բոյսը բարձրանում է ըստ տեղւոյն $1/2$ արշինից մինչև մի արշին բարձրութեան։

Ծաղիկները թափուելուց յետոյ, կազմվում են խոզակներ (ըստ տեղական [illegible])․ այդ խոզակները բացվում են կամ աւելի լաւ ասենք ճեղքվում են ցոյց տալով իրենց միջից ձիւնափայլ բամբակը. այդ պատահում է գրեթէ սեպտեմբերի վերջերին, և այնուհետև եղանակի փոխուելը դէպի ցուրտը արագացնում է այդ գործողութիւնը։

Սորանից յետոյ մնում է գիւղացիին իր քրտինքի և աշխատութեան արդիւնքը հաւաքել. ամբողջ ընտանիքով դուրս է գալիս նա այն ուրախութեան օրին բամբակ քաղելու։

Իր կճեպներից և կոճղներից զատելու համար բամբակը գցում են այդ գործողութեան համար շինած մեքենաների մէջ, որոնք սղոցաւոր են կոչվում, և ուր հետզհետէ մաքրելով դառնում է փամփշտահանելու նիւթ։

Որոշել ճշգրիտ թէ որքան է հասնում այն քանակութիւնը բամբակի, որ դուրս է գալիս Երևանի նահանգում, այդ անհնարին է մեզ, վասն զի այդ մասին հարկաւոր էր քաղել հաստատ աղբիւրներից ամենաճիշդ տեղեկութիւններ, որոնք երկար ժամանակի կարօտ են, սակայն իմ այդ մասին արած հարցուփորձերից, և հմուտ անձինքներից քաղած տեղեկութիւններից կարելի է եզրակացնել որ Երևանի գաւառը արտադրում է տարին միջին թւով 200,000 փութ բամբակ։

Երկու տեսակ բամբակ կայ. Ամերիկայի սերմի բամբակ և հասարակ սերմի, որը տեղացիք ղարադօզայ են անուանում։

Ամերիկայի սերմի գլխաւոր յատկութիւններից մէկն է այն, որ նա ինքն իւրեն հեշտութեամբ դուրս է գալիս և վայր է ընկնում իր խոզակից, իր կեղևից, այդ պատճառաւ նա լինում է մաքուր, նորա մազերը (волокна) երկար են և կակուղ. իսկ ղարադօզան այդ յատկութիւնից զուրկ է. նա դժուարութեամբ է զատվում խոզակից և այդ պատճառաւ նա գրեթէ միշտ կեղևների հետ խառն է լինում, սորա մազերը կարճ են և կոշտ։

Մի տեսակ ևս կայ որ փէշտաթ է ասվում,—դա առաջին քաղն է այն խոզակներից, որոնք շուտ են բացուել։

Ընդունելով որ վերոյիշեալ քանակութեան $1/3$ մասը հասարակ է, իսկ $2/3$ մասը Ամերիկայի սերմի, և ընդունելով այժմեան գները (առաջինը 5—40 կոպ., իսկ երկրորդը 6—50) ուրեմն մեր գաւառը արդիւնաբերում է միջին հաշւով 1,200,000 մանէթի բամբակ։

Աւ.

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻՕՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ *)

Ներքին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կովկասեան փոխարքան բարեհաճեց հրամայել կատարել Թիֆլիս քաղաքում միօրական ստատիստիկային ժողովրդագրութիւն, որ գլխաւորապէս նպատակ ունի յայտնի անել բնակիչների թիւը, նոցա կազմակերպութիւնը և նոցա դասաւորութիւնը քաղաքիս այլ և այլ մասերում։ Բացի, որ և է փինանսական նպատակներ, ներկայ ժողովրդագրութիւնը ամենևին չունի։

Կարգադրողական մասնաժողովը որ կազմված է ժողովրդագրութիւնը կատարելու համար, աչքի առաջն ունենալով նորա կատարման միջոցի մօտենալը, օգտաւէտ է համարում հրատարակել բնակարանների ցուցակների մէջ բովանդակված հարցերը և նոցա պատկանող բացատրութիւնները, որ այդ միջոցով Թիֆլիսի բոլոր բնակիչները ծանօթանան այն կանոնների հետ, որք հաստատված են ժողովրդագրութեան կատարման համար։

Բնակիչների դրութիւնը իւրաքանչիւր տան մէջ պէտք է կատարվի անպատճառ բնակարաններով։

Այդ պատճառով իւրաքանչիւր բնակարանի տէրը, կամ այն անձը որ բռնած ունի բնակարանը, ստանում է կանխիկ մի թերթիկ (իւրաքանչիւր բնակարանի համար տան մէջ կը տրվի առանձին թերթ, մի մի օրինակ)։ Թերթիկները երկու օր ժողովրդագրութեան սկսվելուց առաջ կը բաժանվին հաշւողների ձեռքով բնակարանների տէրերին, որք պարտաւոր են կատարել իւրաքանչիւրը իր թերթը և ժողովրդագրութեան օրը (կամ լաւ է տակ թերթերի վերադարձման օրը), այդ թերթիկները յետ են տրվում մի և նոյն հաշւողին իսկ այդ վերջինը նրանց ստանալով, պարտաւոր է տեղի վրա, տիրոջ ներկայութեամբ վերստուգել թերթը։ **)

Յիշեալ բնակարանական թերթիկները պարունակում են իրանց մէջ հետևեալ հարցերը՝

Թերթիկ ժողովրդագրութեան բնակվող-

*) Անցեալ տարվայ «Մշակի» 44 համարում տպվեցան արդէն լինելու ժողովրդագրութեան ընդհանուր սկզբունքները։

Խմբ.

**) Եթէ բնակարանի տէրը չը կարողանայ գրել թերթի վրա, հաշւողը պէտք է յանձն առնէ այդ գործը։

ների համար №———————բնակարանում *)
տան №————— փողոց ————————

Ա.) Տեղեկութիւններ բնակարանների վրա։

1) Ինչ յարկումն է բնակարանը։ 2) Ինչքան սենեակներ կան բնակարանում (խոհանոց և նախասենեակ հաշւում են որպէս սենեակներ, իսկ անցքեր, պահարաններ և այլն բոլորովին չեն հաշւում)։ 3) Դատարկ է արդեօք բնակարանը մի ընտանիքի բնակութեան համար, կամ թէ բնակարանի տէրը թոյլ է տալիս իր մօտ կենողներին։ 4) Գործածւում է բնակարանը միայն բնակութեան համար, կամ նորա մէջ գտնվում է որ և է ուսումնարանական, առևտրական, արդիւնագործական կամ այլ մի հիմնարկութիւն (օրինակ՝ ձրիավարժ ուսումնարան, մասնաւոր դպրոց, գրասենեակ, կամ լրագրի խմբագրատուն, կրակի ապահովութեան դէմ գործակատարութիւն, նոտարիական գրասենեակ, հաշտարար դատաւորի դիւանատուն և այլն) և ինչ տեսակ հիմնարկութիւն։ 5) Որքան վճարվում է բնակարանի համար։

Տեղեկութիւններ անձինքների վրա։

Բնակարանական թերթիկների միւս երեսը բաղկանում է 11 բաժիններից։ 1) № անձի։ 2) Անուն և ազգանուն անձի (նորածինները նշանակվում են հասարակ կերպով՝ տղայ, աղջիկ. կոյրերի և խուլ ու մունջների անունների մօտ դրվում է՝ կոյր, խուլ և մունջ)։ 3) Քանի տարեկան է։ 4) Ընտանեկան դրութիւն՝ անպսակ, պսակված կամ այրի. օրինակ, պսակված կին կամ այրի կին. բաժանված, բաժանված կին։ 5) Ինչ դաւանութեան։ 6) Ինչ դասակարգի։ 7) Ինչ պարապմունք ունի։ 8) Ազգութիւն։ 9) Մայրենի լեզու։ 10) Կարող է գրել և կարդալ մայրենի լեզուով, կամ մի այլ լեզուով 11) Բնակիչ կամ եկւոր Թիֆլիսի մէջ, և որտեղից։ **)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Խօսակցութեան նիւթը Երևանում, որ պտտում է այժմ բերանից բերան, ոչ այլ ինչ է եթէ ոչ այդ քաղաքի հասարակութեան բողոքը իր այժմեան թեմական առաջնորդ Եղիազար արքեպիսկոպոսի վրա. Գրեթէ երկու տարի հայ ժողովուրդը ենթարկւած է այդ անձի ղեկավարութեանը. Ճշմարիտն ասած եպիսկոպոսը կատարելապէս անընդունակ երևաց լցուցանելու այն պարտականութիւնքը, որոց համար կոչւած է նա. Հասարակութեան մէջ վաղուց կար զրոյց այդ մասին, և ահա այս տարւայ Ջրօրհնեաց հանդէսի սըրբազանի մի խոշոր սխալը աւելի նպաստեց այդ հանգամանքին, որից գրգռւած մի քանիսը քաղաքիս առաջնակարգ անձինքներից, դիմեցին Էջմիածին Նորին Վեհափառութեան մօտ, խնդրելով փոխել առաջնորդին. Բայց թէ ինչ էր այդ սխալը որ ես յիշեցի, որպէս զի ընթերցողը կարողանայ մի գաղափար կազմել, ես անհրաժեշտ եմ համարում այդ լաւութեամբ չանցնել։ Ահասարակ ամեն տարի մեզանում երբ կատարվում է Ջրօրհնեաց տօնը, սովորութիւն էր հայոց և ռուսաց եկեղեցական ժամասացութիւնը այնպէս յարմարեցնել միմեանց, որ այդ երկուսը միանուագ դուրս գային եկեղեցուց Հրազդան գետելու. այս տարի հայերին չը յաջողեց ռուսաց հետ հաւասար գնալ, նոքա արդէն մկրտութեան կարգը կատարած վերադառնալու մօտ էին, երբ հայ եկեղեցական դասը խուռն բազմութեամբ շրջապատուած իջնում էր Հրազդանի ափը. Մի երևելի թուլութիւն չենք կարծում որ հայոց եկեղեցին չը կարողացաւ ռուսաց հետ հաւասար ընթանալ, այդ չը յաջողեց երբ չը կար օրինաւոր կարգադրութիւն ինչպէս լինում էր ամեն տարի, բայց միթէ ներելի է գերապատիւ առաջնորդին առանց մկրտութեան կարգը և պատշաճաւոր խորհուրդները ըստ օրինաց հայաստանեայց եկեղեցւոյ կատարելու, թերի թողնել մեր նախահարց հաստատւած աւանդութիւնները.... Քաղաքիս ղեկավարը յայտնեց սրբազանին նրա կարգադրութեան անյարմար լինելը, բայց նորին գերապ. չուզեց լսել նրան ասելով «եղ իմ քանիս ա» Ես այստեղ չեմ երկար խօսել եպիսկոպոսի այն ծիծաղաշարժ խօսակցութեան վրա որ ունեցաւ նա ռուս քահանայի հետ, վասն զի այդ ամօթը դարձեալ մերն է, այլ ընթերցողիս ուշադրութիւնը ուղղակի հրաւիրում եմ եպիսկոպոսի անցեալ 9-ին այդ անցք Պետրոս և Պօղոս եկեղեցում երեկոյեան տուած մի յանկարծակի քարոզի վրա, երբ նա լսել էր թէ ժողովուրդը դիմել է Էջմիածին կաթողիկոսի մօտ և սա յարգելով նոցա խնդիրը, խոստացել է յետ կանչել Երևանի առաջնորդին. Ամենախօսը սաստիկ յուզվախուած էր երևում, նա իւր միջնադարեան զէնքով անէծքներ էր թափում, ինքը իւր անձը պատկերացնում էր մի արժանաւոր և իւր նմանը չը լինող մի անձ «Նորութեան հետևող չեմ» խոստովանում էր այդ «ես հին եմ, հին» կրկնում էր նա, ուրեմն ամենից փորձառու և շատ բան տեսած. Սրբազանի ճառից երևում էր որ նորան ոչ պակաս դիպել էին և «Մշակի» № 50 Երևանից հաղորդած լուրերը, որոց մի կէտը վիրաւորում է սրբազանութեանը, միւս կէտը հարուածում էր դպրոցի անմխիթար վիճակը, այն նա զանցառութիւն չը ավեց և այն կարգը ուր ասւած է՝ քնքուշ սեռը հեռի է մնում բոլորից. «լաւ կը լինի և մինչև այսպէս վարվի» խորհուրդ տւեց գեր. հայրը «ինչ Թաղուսն, ինչ բան որ անպատճառ աղջիկ պիտի ըլլի. եղ երիտասարդներից հեռու կացէք, դրանցից շատ բան դուրս չի գալ...» Մենք կարծում ենք որ անվայել է մի հոգևորականի, որ կրում է իւր վրա արքեպիսկոպոսի տիտղոսը, մեղադրել այն խումբը որ պաշտպանել է Թատրօնի պատիւը և նրա բեմի նշանակութիւնը, հազար ու մի արգելքների յաղթելով, հազիւ հազ կարողացել է երբեմնապէս տալ ներկայացումներ յօգուտ այն խեղճ դպրոցի, որ եպիսկոպոսի անհոգութեամբ խղճալի ընկած իւր բարեկարգ կերպարանքից, փոխանակ նոցա աշխոյժը աւելի վառելու, ահա ինչ ակնարկութեամբ է վարձատրել.. Վերջացնելով նամակս, ասում եմ եպիսկոպոսի փոխւելու հարցը, և ժողովրդի անպատականութիւնը դէպի նա ամենանշանաւոր խօսակցութեան նիւթն է Երևանում հայկական եռանդի մէջ, ամենից լսվում է առաջնորդի Պետրոս և Պօղոս եկեղեցում տուած քարոզը և նրա զրոյցը ռուս քահանայի հետ, ինչ որ ..... մէջն է Եղիազար արքեպիսկոպոսի այստեղից փոխվելու հարցը Վեհափառի մօտ, հաստատ չենք կարող ասել, բայց յուսով ենք, որ մի եռանդոտ և աշխատասէր անձը կուղարկվի Երևան, հովւել մեր հօտը. *)

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շամախի, դեկտեմբերի 13

Ընտիր և գործունեայ անձինք մեր հասարակական գործավարութիւնից միշտ աշխատում են իրանց հեռու պահել, որովհետև ինչպէս յայտնի է իմ մի քանի նամակներից «Մշակի» մէջ նրանց նախկին գործավարները թոյլ են տուել իրանց շատ անճշգութիւններ, որոնց ուղղելը այժմ շատ դըժուար է. Քաղաքիս գրագրանական ընկերութիւնը գրեթէ նոյնպէս աւելի է տալիս իւր պատուելի գործակատար ընտրվող անձանց ակամայ յանձն առնել գործավարութեան պաշտօնը, այն ինչ գրատան կանոնադրութեան մի քանի որոշ, պարզ և թեթև յօդվածները չը պիտի առաջացնէին այդ ակամայ յանձնառութիւնը. Կանոնադրութեան երեք նշանաւոր յօդվածներով գրատան իւրաքանչիւր անդամը տալիս է 1, անդամակցականը, 2, կամաւոր նուէր և 3, գրաւոր կերպով յայտնում է ընկերութեան, եթէ նա զանազան հանգամանքներից ստիպված չէ կարողանում մասնակցել ընկերութեան նպատակին, թէ նրան այնուհետև չի յաջողվելու անդամակցել ընկերութեան. Այժմ ընկերութեան մի քանի անձինք հակառակ այդ յօդվածներին վարվելով, կարծես սովորաբար ծառայեցնում են գործակատարներին հեռանալու չը լինել անզոյն հասարակութեան չահերը լցուցանելու. Նրանցից մի քանիսը 2 տարի է ի վեր անդամակցականը չը վճարելով, վերջը առաջարկում են գործակատարներին անդամակցականի հաշւին վեր առնել չիթեղէն, չալվարներ և շատ սորա նման իրեղէններ, իսկ միւսները չը կամենալով այլ ևս անդամակցել չէ թէ սորա համար յայտնում են ընկերութեան կամ նրա գործավարներին, որպէս զի նոքա նոր ընտրութեան ժամանակ կարողանան նոր գործավարներին ճիշդ հաշիւ տալ թէ ընկերաց քանակութեան մասին և կամ թէ նրանցից սպասելի անդամակցականների մասին, այլ հաղորդում են մի այլ անձին որը անյայտ պատճառով ժամանակին չը յայտնելով գործակատարաց իւր տեղեկութեան մասին, գործակատարներին ստիպում է ընկնել զանազան սխալների մէջ (տես «Մշակի» 5, 6 և 10 համարները արժ. Խորէն վարդապետի մասին)։ Բայց որովհետև մեր ընկերութիւնը պիտի ունենայ միայն լրագիրների և գրեանց կօլլեկցիա (ժողովածու) և ոչ այլ իրեղէնների և ապագայում մի նշանաւոր դեր պիտի խաղայ քաղաքիս հայ հասարակութեան համար, ուստի ես պատիւ ունեմ ամենախոնարհաբար խնդրել՝ այն անձինք, որոնք զանազան պատճառներով չեն կարող կամ չեն կամենում այլ ևս մասնակցել ընկերութեան, յայտնել այդ մասին ուղղակի ընկերութեան գործակատարներին և անդամակցականը դրամով լցուցանել. Մեր այդ խնդիրը կատարող պատուելի պարոնները կը հասցնեն ընկերութեան և այն օգուտը, որ նրա գործակատարաց կամքի և մտքի ոյժը չեն ենթարկի իրանց էգոիզմին, որը սովորաբար յատուկ լինելով նրանցից շատերին, մոլորեցնում է վերջիններին հասարակական գործոց կանոնաւորութիւնը ճըշդութեամբ կատարելու մէջ.

Գործակատար-Գանձապահ գրադարանի

Ա. Մէլիք-Շահնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են յայտնել որ քաղաքիս մէջ լինելու միօրեակ ժողովրդագրութեան համար կազմված կարգադրողական մասնաժողովի ժամանակաւոր դիւանատունը (կանցելարիա) գըտնվում է կօմենդանտսկի փողոցում, տուն № 38. Ցանկացողները ժողովրդագրութեան գործունէութեան մէջ մասնակցելու կարող են դիմել այնտեղ ամեն օր (բացի տօն օրերից) առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժամ և կէսօրից յետոյ 7—9 ժամ.

***

Խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ մի նոր հայերէն գիրք «Շտեմարան մանկանց» ֆրանսիերէնից թարգմանած Նատալեայի Խասպարեանցից. (Ելիսավետպոլ, Ֆեօդորովի և Թառումեանցի տպարան, 1876).

***

Յունվարի 19-ին, երեքշաբթի օրը եղաւ Թիֆլիսի դումայի մէջ ձայնաւորների առաջին նիստ նոր ընտրված քաղաքագլուխ պ. Կիպիանու նախագահութեամբ. Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը երբէք ունեցած չէ մի նախագահ, որ այդքան հաւկացողութեամբ կառավարէր ձայնաւորների նիստերը, այդքան կարգ ու կանոնաւորութիւն պահպանէր վիճաբանութիւնների մէջ, այդքան պարզ, հասկանալի և գործնական կերպով զեկուցումներ անէր դումային. Քաղաքային ժողովը ստացաւ բոլորովին այլ կերպարանք. Առաջին նստի մէջ վճռված հարցերից մինն էր՝ խնդրել կառավարութիւնից պակասեցնել այն ծախսերը որ անում է քաղաքը զինւորականներին և զօրքը պահելու համար. Ճշմարիտ է Թիֆլիսը վճարում է զինւորականների բնակարանի հարկը և զօրքը պահպանելու վրա անհամեմատ աւելի մեծ ծախս է անում քան թէ Օդէսա, Մոսկվա և մինչև անգամ աւելի քան թէ Ս. Պետերբուրգ. Թիֆլիսի ամբողջ եկամուտը հասնում է մինչև 344,727 րուբլ, իսկ զօրքի վրա մենք ծախսում ենք 122,462 րուբլ. ուրեմն աւելի քան թէ մի երրորդական ամբողջ արդիւնքից. Եթէ քաղաքի ծախսերը զօրքի վրա պակասեցրած կը լինեն մինչև 22,275 րուբլ, դարձեալ քաղաքի տարեկան եկամուտը կաւելանայ աւելի քան թէ 100,000 մանէթով.— Յունվարի 26-ին եղաւ Դումայի երկրորդ նիստը.

***

Լսում ենք որ կազմվում է Թիֆլիսում մի բաժանորդական ընկերութիւն հայոց-վրաց Թատրօն հաստատ և տեղական սկզբների վրա հիմնելու և Թատրօնի համար մի առանձին շինութիւն կառուցանելու համար.— Վերջապէս պիտի առնվի այդ վաղուց ցանկալի գործը, թէ նորից կանցնէ որպէս մի անհիմն լուր.

***

Հին-Նախիջևանից մեզ գրում են որ դեկտեմբեր ամսին 1875 թուի այդտեղ բացվել է օրիորդաց հայոց ուսումնարան. Ուսումնարանի գլխաւոր աղբիւրը պէտք է լինէր այն փողը որ 17—18 հիմնադիր եղած անձինք խոստացել են տալ տարից տարի. Իւրաքանչիւրի սահմանւած տարեկան գումարը 36 րուբլ էր. Այժմ այդ հիմնադիրներից մի քանիսը հրաժարվում են խոստացած գումարը վճարելու, պատճառ բերելով որ առանց նոցա գիտութեան ընտրվել են՝ օտարական (ուրիշ քաղաքի հայ) հոգաբարձու և օտարական վարժապետ... Եթէ օտարական հոգաբարձու և վարժապետը չը հրաժարվեն իրանց պաշտօնից, հիմնադիրները սպառնում են որ պահպանելու չեն ուսումնարանը, որ ի հարկէ չէ կարող գոյութիւն ունենալ, ունենալով աւելի քան 800 րուբլ ծախս առանց որ և է աղբիւրի. Մի երիտասարդ խոստացել է 100 րուբլ ուսումնարանին, բայց սպասում է մինչև որ կազմվի ժողովը և կարողանայ այդ ժողովի մէջ օրինաւոր դրամագլուխ ուսումնարանի համար հաւաքել.

***

Յունվարի 26-ին Թիֆլիսի Դումայի ընդհանուր ժողովի նստի մէջ վճռված գլխաւոր հարցերից մինն էր Թատրօնի հարցը. Դուման վճռեց չը չարունակել դատ Թատրօնի շինութեան տէրերի, Թամամշևների հետ, այլ ընդունել նրանց վերջին առաջարկութիւնը՝ դուրս բերել քաղաքային Թատրօն հին տեղից, այսինքն Թամամշևների քարվանսարայից, թոյլ տալ որ Թատրօնը շինվի քաղաքիս մի այլ տեղում իրանց հաշւով գնած և ընդունել Թամամշևներից առաջարկած 80,000 րուբլ գումարը, այն պայմանով որ այնուհետև քաղաքը Թատրօնի շինութեան վրա ոչինչ ուրիշ ծախսեր չունենայ.

***

Վրաց «Դրօեբա» լրագիրը հաղորդում է որ Թիֆլիսի Թատրօնում վրացերէն լեզուով ներկայացրած «Էլի մէկ զոհ» կոմեդիան տուեց արդիւնք 365 րուբլ, և 20 կ. որ գումարից դուրս գալով ծախս, մնաց զուտ արդիւնք 163 րուբլ և 70 կօպ. Ներկայացումն բարեգործական նպատակով էր.

***

Նոյն լրագրում կարդում ենք, որ Թիֆլիսի փօստային վարչութիւնը յայտնել է թէ այսուհետև հասարակ նամակները փօստում ընդունվում են և կէսօրից յետոյ 5—7 ժամ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

—

Ստացված վերջին հեռագիրը հաղորդում է Կ. Պօլսից որ երբ թէ մեծ-վեզիրը դիտաւորութիւն ունէ շուտով պատասխանելու գրաֆ Անդրաշի ավստրիական մինիստրից ուղարկված պաշտօնական թղթին, որով պահանջվում են Թուրքիայից զանազան վերանորոգութիւնների իրագործվելը. Կարծում են որ Թուրքիան կը պատասխանէ այդ թղթին հաշտական ձևով.— Կանդիա կղզու վրա ապստամբութիւն յայտնվեցաւ՝ բնակիչների և զօրքի մէջ կռիւներ պատահեցան.— Լսվում է որ Չեռնոգօրիացի ապստամբները կամենում են պաշարել և վեր առնել Ալէկ քաղաքը, որ մի նաւահանգիստ է Ադրիական ծովի վրա. Եթէ այդ դիտաւորութիւնը նրանց կաջողվի, այն ժամանակ Թիւրքաց զօրքը, որ դեռ կայ ապըստամբված գաւառներում, շատ վատ դրութեան մէջ կը լինի, որովհետև միայն ծովի միջոցով Ալէկ նաւահանգիստն են հասցնում Կ. Պօլսից զօրքին հարկաւոր զէնքը և ուտեստեղէնների պաշարը. Իրան զօրքի համար անկարելի կը լինի ցամաքով յարակցել եւրոպական Թիւրքիայից Հերցեգովինայի հետ.

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

—

Դեկտեմբերի 22-ին, 75

Նամակներիցս մէկի մէջ Ֆրանսիայի այժմեան ազգային ժողովին ես նմանեցրի մի հոգեարքի. Եւ ճշմարիտն ասած՝ չեմ սխալւել. Ինչպէս մի հիւանդ, մեռնող մարդ, որ հոգին աւանդելու ժամանակ ամեն մի րօպէ չափազանց ուժ, սաստիկ թուլութիւն ցոյց տալով՝ գնում, հեռանում է այս մեզաւոր աշխարհից,—նոյնպէս և Ֆրանսիայի ազգային ժողովը իր կառավարութեան հետ միասին՝ ներքին-նախարար պ. Բիւֆէի փոփոխամիտ կառավարութեան հետ, մի և նոյն երևոյթ է ներկայացնում.

Բարձրագոյն ազատ կրթութեան առաջարկութիւնից յետոյ, որ ազգային ժողովը քուէարկելով սարսափելի թուլութիւն ցոյց տուեց, այսօր կարծես կենդանանում է և ուժ է ստանում. Խօսքս ազգային ժողովի ձեռքով նոր ընտրած եօթանասունուհինգ մշտական սենատորների վրա է, որոնցից մօտ 50 հոգի համոզւած հանրապետականներ են.

Բայց այնու ամենայնիւ մի հաւատաք այս րօպէական փոփոխութեանը. Համոզւած եղէք, որ այս երևոյթը կեանքի նշան չէ.—Ընդհակառակը, մահուան տագնապի նշան է. Մեծ բժիշկը—Ֆրանսիան, իր հասարակական կարծիքով—որոշել է սորա վերջին շունչ տալու օրը. Չի անցնիլ երկու ամիս, ասում է նա, ազգային ժողովը կը մեռնի, այսինքն

---

*) Որովհետև Թիֆլիսի տների մէջ՝ բնակարանները չունեն նոմէրներ, ուրեմն հաշւողը սկսում է հաշւել այն բնակարանից որի մէջ ինքն նախ և առաջ է մտնում.

**) «Մշակի» միւս համարում կը տպենք չարունակութիւնը՝ բացատրութիւն թէ ինչպէս բնակարանների տէրերը պէտք է կատարեն ժողովրդագրութիւնը. Խմբ.

*) Թողնելով մեր պատուելի թղթակցի վրա հաղորդվածի պատասխանատուութիւնը, շատ ուրախ կը լինէինք, եթէ գերապատիւ առաջնորդը հաղորդէր մեր լրագրին իր կողմից տեղեկութիւնը այդ անցքի մասին. Խմբ.

կը լուծվի։ Հէնց այդ մահուան օրերի մօտենալն է, որ չուարացրել է սորան։ ինքն էլ չը գիտէ, ինչ է անում։

Ինչ և իցէ այս եօթանասուն և հինգ չը փոխւող, ցմահ ընտրուած սենատօրները հետաքրքիր երևոյթ են ներկայացնում՝ ոչ թէ միայն Ֆրանսիայում, այլ ամբողջ Եւրոպայում։ Մենք էլ թէև առիացնք, բայց ինչ կուզէ լինի փոքր ինչ խօսենք այս մասին, տեսնենք, իմանանք, թէ Եւրոպայում ինչեր են պատահում։

Ի հարկէ ձեզ յայտնի կը լինի, որ այս տարուայ փետրվար ամսի 25-ից սկսած Ֆրանսիան ունի հանրապետական սահմանադրութիւն, որ քուէարկվելով այնուհետև երկրի օրէնք դարձաւ։ Սորա վրա աւելորդ է խօսել։ Դուք արդէն շատ լաւ գիտէք, որ Ֆրանսիայի օրինաւոր, պետական ձևը հանրապետութիւն է։ Ազգային ժողովի կտակի—սահմանադրութեան—զօրութեամբ իր ժառանգութիւնը բաժանած պիտի լինի երկուսի։ Ուրիշ խօսքերով՝ ապագայ ազգային ժողովը կը կազմուի երկու պարլամենտից—օրէնսդրական ժողովից և սենատից։

Որպէս թէ օրէնսդրական՝ այսինքն պատգամաւորների ժողովը չէր կարող մենակ կառավարել երկիրը, որպէս թէ Ֆրանսիան չէր բաւականանալ նորանով։ Բայց ինչ անես, բանը սորանում չէ։ Միապետական, յետադէմ և կղերական մարդիկ, որոնցով լցուած է այժմեան ազգային ժողովը, և որոնք վերջին պատերազմի թշուառ ժամանակ անուշադրութեամբ ընտրվել էին, բղաւեցին, հառաչեցին, թէ սենատ էլ պէտք է՝ սենատ, որպէս զի ապագայում երկիրը լաւ կառավարուի։ Սակայն սոքա իսկապէս երկրի օրինաւոր կառավարութեան, ժողովրդի բարելաւութեան և առաջադիմութեան ամեն տեսակ սկզբունքների համար չարտայայտեցին այդ ցանկութիւնը։—Ոչ, սոքա սրտի մէջ մի ուրիշ բան ունեն, որ ահա հինգ տարի կայ բարեբաղդաբար չեն կարողանում իրագործել։ Թագաւորութիւն են ուզում. թէև իրանք էլ չը գիտեն ինչ թագաւորութիւն... Ինչ ասեմ, Ինքը Տէրը սրանց բարի ճանապարհ տայ։ Սոքա իրանց պատմութեան անցքերը մոռացել են։

—Գլուխներդ քարին, պատասխանեցին հանրապետականները, լաւ, սենատ էլ լինի. միայն թէ մենք հեռանանք, թողնենք մեր հայրենիքին, որ ինքը խօսի և յայտնէ աշխարհի առջև իր համոզմունքները։

—Այո, կրկնեցին յետադէմները, բայց սենատ բաղկացնող բոլոր անդամները թող երկիրը չընտրէ։ Երեք հարիւր անդամներից 75-ը թող հանրապետութեան նախագահը, մարշալ-Մակ-Մահօնը ընտրէ։

—Այդ էլ լինի, այդ էլ մոցրէք սահմանադրութեան մէջ, նորից պատասխանեցին հանրապետականները, միայն ի սէր աստուծոյ հեռանանք այստեղից։

Բոլորեքեանք համաձայնուեցան։

Մարշալը այս անգամ խելօք վարուեց։—Նա շնորհակալութիւն յայտնելով ազգային փտած ժողովին ասեց՝ թէ այդ երևոյթը հաւատարմութեան մի մեծ նշան է, որ ցոյց են տալիս պատգամաւորները դէպի հանրապետութեան նախագահը, բայց ոչ մի կուսակցութեան դժգոհութիւն չը պատճառելու համար չեմ կարող յանձն առնել։ Ուստի դուք ինքներդ ընտրեցէք իմ փոխանակ։

Ընտրենք, ասեց ազգային ժողովը մեր միջից, 75 հոգի։ Ընտրենք, կրկնեցին ամենքը։ Եւ ահա ազգային անպէտ ժողովը, որ հաւատում է թէ Աստուած վեց օրում ստեղծեց աշխարհս և եօթներորդ օրը հանգստացաւ՝ դորա դէմ է վարվում։ Մօտ 12 օր, ուրեմն երկու անգամ վեց օր, չարչարուեցաւ, տանջուեցաւ մինչև 75 սենատոր կընտրէր իր անդամների միջից։

Մեծ մասը, բազմութիւնը, մօտ 50 մարդ այդ 75 անմահներից, ինչպէս անուանում են տեղիս լրագիրները, պատկանում են հանրապետական զանազան կուսակցութիւններին։

—Մնաք բարով յետադէմներ, ասում են այսօր հանրապետականները. մնաք բարով, ձեր դուքս դը-Բրոյի աւանդական, ողորմելի քաղաքականութեամբ։ Հինգ տարի է աշխատում էք, ոչինչ չը կարողացաք անել։ Ձեր երազը, երազ կը մնայ, չի իրագործուիլ։ Համոզուած եղէք, որ սենատով էլ ոչինչ չէք շահիլ։ Մենք շատ ուրախ ենք, որ պատուելի դուքս դը Բրոյը իր քաղաքական ժառանգներով և Բուֆեն իր վատ ու վնասակար վարմունքով, չը կարողացան մտնել սենատը ազգային ժողովի ձեռքով, իսկ քուէարկող ժողովրդից այնքան յոյս ունենք, որ այդպիսիներին ընտրած չենք տեսնիլ։

Եւ յիրաւի, եթէ այսպիսի անորոշ ազգային ժողովը 75 մարդ ընտրելու մէջ 50 հանրապետական ընտրեց—շնորհակալ լինելով նոյն իսկ բոլոր հանրապետականների միջեւ համաձայնութեան և նոցա բռնած տակտիկային—ապա ուրեմն ինչ կասէք երկրի մասին, որ երեք տարի կայ պատրաստվում է ընտրութիւնների համար։

Այո՛ Ֆրանսիան պատրաստ է ընդհանուր ընտրութիւնների համար և լաւ է պատրաստ։ Չը նայելով ընտրութեան սիստեմին, որ ներկայ նախարարութեան՝ փոփոխամիտ և յետադէմ պ. Բուֆէի նախարարութեան ցանկացածն է, չը նայելով քաղաքական զանազան հալածումների արգելմանը՝ Ֆրանսիան կաշխատէ, ինչպէս շատերը համոզուած են, ընտրել առաջադէմ, անձնուէր հանրապետական մարդիկ, թէ պատգամաւոր և թէ սենատոր լինելու։

Դարձեալ մի անգամ կրկնենք և ասենք, որ ազգային ժողովի ապագայ, նոր անդամները ցոյց կը տան, թէ ինչպէս պէտք է կառավարել երկիրը, ինչպէս պէտք է առաջադէմ լինել հասարակական գործերում։

Այս է իսկապէս ամբողջ Ֆրանսիայի առողջ ու ազնիւ հասարակական կարծիքը, որ երկու ամսից յետոյ պիտի իրագործուի։

Ցարդ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Միւնխեն 6 յունվարի 76.

Այս 1876 թուականի յունվարի 1-ից, ինչպէս որոշուած էր, մտան ամբողջ գերմանական կայսրութեան մէջ նոր դրամները «պետական արժողութեան» (Reichswährung) ի գործադրութիւն, որոյ առթիւ գերմանացի մանր թագաւորութեանց կամ դքսութեանց հին, բաժանման զանազան սիստեմների պատկանող, ինքնուրոյն դրամները բոլորովին կորցնում են իւրեանց արժէքը առուտուրի մէջ։ Այսպիսի յանկարծական փոփոխութիւն կարող էր հեշտ յաջողել, եթէ յառաջուց նոր դրամի բաւարար քանակութիւն արդէն տարածուած և շրջողութեան մէջ լինէր, մինչդեռ այժմ պատող նոր դրամի քանակութիւնը հազիւ թէ համապատասխանէր պահանջին։ Ուստի նոր դրամի փունկցիայի մէջ մտցնելովը հին դրամի արժէքը իսկոյն և եթ ոչնչացած հրատարակել կը նշանակէր մի անգամից, իբրև մի հարուածով դադարումն տալ առուտուրին, որպիսի դադարումն չը պատճառելու համար հին դրամները թէ մեծ թէ փոքր երևի դեռ մի քանի ամիս գործածութեան մէջ կը մնան, թէպէտ և արդէն վաճառանոցներում և խանութներում տուած հին դրամը փոխանակվում են նորի։

Հին, հարաւային գերմանական, մանաւանդ որպէս բաւարական դրամները մի տարօրինակ սիստեմ էին պահում իւրեանց բաժանման մէջ։ Այսպէս օրինակ մեծ արժողութեան դրամները, ոսկի, արծաթ թէ թղթադրամ պահպանում էին տասնական սիստէմ (Decimalsystem). որպէս 5, 10, 25, 50, 100 և այլն գուլդէնանոց (Gulden, Florin) թղթերը, իսկ մի գուլդէնից դէպի վար բաժանումը հետևեալ կարգին էր ենթարկվում. մի գուլդէնը բաղկանում էր երկու կիսագուլդէններից (արծաթ) կամ տասն վեցնոցներից (Sechser) կամ քսան գրօշներից և կամ վաթսուն կրայցերներից (արծաթախառն մետալ), իսկ իւրաքանչիւր կրայցեր բաղկանում էր երկու կիսակրայցերից, կամ չորս պֆեննիգներից (ոչ նոր պֆէննիգ) և կամ ութն հելլերներից (ամէնը պղինձ)։ Այս տեսակ սիստեմն կարծես մի հակասութիւն էր կազմում այժմ գրեթէ ամենուրեք ընդունած տասնական սիստեմայի, որին ենթարկուած է նաև այժմեան գերմանական նոր դրամը. այնպէս որ իբրև նորմալ դրամ ընդունված է մի մարկ, որ արժողութեամբ թէև աւելի է մի ֆրանկից, բայց բաժանվում է, ինչպէս վերջինս, երկու, հինգ, տասն, քսան, յիսուն և հարիւր մասերի վերա. հետևաբար մի մարկը բաղկացած է երկու կիսամարկերից, կամ հինգ քսանպֆէննիգնոցից (ամէնը արծաթ) կամ տասն տասնպֆէննիգնոցից, և կամ քսան հինգպֆէննիգնոցից (վերջիններս նիկէլ սոված մետալից) կամ յիսուն երկուպֆէննիգնոցից և կամ վերջապէս հարիւր պֆէննիգներից (պղինձ)։

Հին դրամը փոխվում է նորի վերա հետևեալ կերպով. իւրաքանչիւր կրայցեր (որ գրեթէ մեր մի կոպէկն է) արժէ երեք նոր պֆէննիգ, բայց վեց կրայցեր փոխողը ունի դորա մէջ մի նոր պֆէննիգի կորուստ, այսինքն չէ թէ 18 այլ 17 պֆէննիգ է ստանում։ Մի մարկը արժէ 35 կրայցեր, երկու մարկը մի գուլդէն և տասն կրայցեր (70 կրայցեր) և այլն։ Նոր դրամի վերին բաժանումները ի հարկէ նոյնպէս պահում են տասնական սիստեմ—հինգ, տասն, քսան մարկնոց արծաթն ու ոսկին, քսանուհինգ, յիսուն, հարիւր մարկնոց թղթադրամները և այլն, բացի թալերը (6 մարկ) *) արծաթ թէ թղթադրամ։

Նոյն փոփոխութիւնը ի հարկէ իբրև բնական հետևանք մտած է ուրիշ շատ բաների կարգում նաև չափերի, կշիռների, փոստային մարկաների և այլ գործադրութեան մէջ, միայն այստեղ այն զանազանութեամբ, որ իւրաքանչիւր տէրութեան նամակի մարկա պետական գինը (Reichswährung) բայց իւր սեփական տէրութեան դրօշն է կրում։ Ընդ նմին արժէն նամակները բոլորը գերմանական կայսրութեան և միւս միջազգային փոստային կօնգրէսին մասնակցող տէրութեանց համար 10 պֆէննիգ ($3^1/_2$ հին կրայցեր, փոխանակ 3-ի) և դէպի Եւրոպայի միւս մասերը 20 պֆէննիգ (7 կրայցեր)։

Այս տեսակ փոփոխութիւնը ունի երկու յիշատակի արժանի առաւելութիւնք. առաջին, որ նա ամենահաստատ գրաւական է նորակազմ գերմանական ազգային միութեան կապը անյողդողդ պահպանելու, երկրորդ՝ որ շատ հեշտացնում է հաշուելու եղանակը իւր տասնական սիստեմայով։

Ժողովրդի մէջ հին և նոր դրամների փոփոխութեան ժամանակ յառաջ եկած դժուարութիւնը խափանելու համար կան հաշուետախտակներ (Rechentafel), ուր իւրաքանչիւր հին դրամի դիմացը գրած է նորա արժէքը նոր դրամով, և որոնց ամենաչնչին գնիրով կարելի է գնել։—Ցաւելով պէտք է աւելացնեմ, որ այս նորութիւնը բերել է իւր հետ նաև մի ոչ շատ ախորժելի նորութիւն—այն է թանկութիւն, մանաւանդ թանկացել են կենսական անհրաժեշտ պիտոյքները,—ուտելեղէններ, խմիչք, վառելիք, բնակարան և այլն։

Նամակիս յարակցում եմ նաև, որ այստեղ այս տարի ձմեռը շատ խիստ է և մեծ քանակութեամբ ձիւներ եկել են։

Յովհաննէս Լալայեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դավրէժ, դեկտեմբեր

Թէև Եղիշէն և առաւելապէս Եզնիկը թողել են մեզ բաւականին հարուստ տեղեկութիւններ հին արևապաշտների կրօնքի և նոցա սովորութեանց մասին, այնուամենայնիւ, նոքա չեն կարողանում մեր հետաքրքրութեանը լիակատար բաւականութիւն տալ։ Նոքա գրել են այնքան, որքան վերաբերում էր իւրեանց աշխատութեան նիւթին։ Իսկ այժմեան Գաւրների, որպէս հին արևապաշտների, կեանքի ուսումնասիրութիւնը կը լրացնէ այն թերութիւնները, ինչ որ պակաս է թողել պատմութիւնը. որովհետև այս ցեղը բոլորովին անփոփոխ է մնացած իւր նախնական դրութեան մէջ։

Եթէ ընդունենք, թէ հայոց ազգը յառաջ է եկել արիական ցեղերից, թէ նա պաշտում էր նոյն կրօնքը, ինչ որ այժմ Գաւրն է պաշտում, թէ նորա լեզուն նոյն ծագումից է, որով այժմ Գաւրն է խօսում,—կը համոզվիմք, թէ Գաւրի կեանքի, գրականութեան և լեզուի (որ մաքուր զանդիկ բարբառն է) ուսումնասիրութիւնը խիստ պայծառ լոյս կարող էր ձգել մեր հին դիցաբանութեան վերա, որ դեռ պարզուած չէ, մեր լեզուի փիլօլոգիայի վերա, որ ամենևին ուսումնասիրուած չէ, և հետևապէս մեր պատմութեան վերա, որ շատ տեղերում մութ է։ Որովհետև մեր նախնիքը սկսեալ ամենահին ժամանակներից, անընդհատ յարաբերութիւններ են ունեցել արիական ցեղերի հետ, որպիսի էին՝ պարսիկները, պարթևները, բակտրիացիք, մարք, և այլն, իսկ այդ ազգերի ներկայացուցիչներն այժմ մնում են Պարսկաստանում իւրեանց նախնական աւանդութիւններով և սովորութիւններով։

Մահմետականութիւնը Պարսից մէջ ոչնչացրեց հին գրականութիւնը, որպէս քրիստոնէութիւնը մեր մէջ. բայց նրանք աւելի բաղդաւոր եղան մեզանից նորանով, որ նոցանից պահպանուեցաւ մի ցեղ, որ ազատ մնաց մահմետականութիւնից և այսպիսով կարողացաւ պահպանել իւր հին գրականութեան մի մասը։—Դոքա Գաւրներն են։ Իսկ մեր հեթանոս եղբայրներից և դժբաղդաբար և ոչ մինը չը մնաց մինչև մեր օրերը։

Իսկ այն, որ մենք պէտք է որոնէինք մեր հեթանոս եղբայրների մէջ, այժմ կարող ենք գտնել Գաւրների մէջ, որովհետև դոքա նոյնպէս ազգակցութիւն ունեն մեզ հետ։

Հնդկաստանի պարսիկ արևապաշտների մէջ այժմ կազմուել է մի ընկերութիւն բարեգործական և ուսումնական նպատակով, և նրանց կողմից ուղարկուած է Թեհրան մի գործակալ Մանուկջի անունով. որ մի կողմից հոգս է տանում իւրեանց պարսկաստանցի եղբարց՝ Գաւրների նիւթական կարօտութեանը, պաշտպանում է նորանց զանազան հալածանքներից, միւս կողմից, հաւաքում է նրանց մէջ գտնուած հին գրքերը։ Մանուկջին մեծ եռանդով ուսումնասիրում է Խորենացին և հայոց այլ պատմութիւնները, որոնք կարող էին պարսից հին պատմութեան մութ տեղերը պարզել։ Որովհետև իրանք պարսիկները (մահմետականները) հին պատմութիւն չունեն, և ոչ հետաքրքրվում են գիտենալ իւրեանց մինչ-մահմետական անցեալը։ Ֆրդովսու գիրքը, որ այդ մասին մի թանգագին հարստութիւն կարող է համարվիլ, այն ևս, որպէս առասպելավիպական բանաստեղծութիւն, զուրկ է պատմական ճշդութիւնից։ Ուրեմն, մի Գաւր ուսումնականի համար, որպէս է Մանուկջին, խիստ ձեռնտու է որոնել իւր ազգի պատմութիւնը աւելի հին արևապաշտների և հայոց գրքերի մէջ, քան պարսիկների մէջ, ուր ամեն ինչ, որ հեթանոսական էր, ջնջեց մահմետականութիւնը։

Ցանկալի կը լինէր, որ միրայինք նոյնպէս հետևէին Մանուկջի օրինակին, և փոխադարձաբար սկսէին ուսումնասիրել Գաւրների գրականութիւնը, նոցա լեզուն և աւանդութիւնները, մեր պատմութիւնը հարստացնելու, և մեր լեզուի փիլօլոգիային նիւթ տալու նպատակով։ Իսկ ինչ որ վերաբերում է այս յօդուածի հեղինակին, նա արդէն սկսել է գործել այդ մասին, որքան կը ներէին հանգամանքները, որքան թոյլ կը տար իւր դրութիւնը...

Մէւ.

*) Պէտք է հասկանալ այսպէս անուանեալ դաշնակցական թալէրները (Vereinsthaler) զանազանելու համար հին հռէնոսեան թալէրներից (Rheinsthaler), որոց արժէքը բոլորովին տարբեր է, և որոց այժմ սակաւ միայն կարելի է հանդիպել փոխանակութեան մէջ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարւայ դեկտեմբեր ամսին գերմանական „Archiv für Ohrenheilkunde" գիտնական հրատարակութեան մէջ, որտեղ գերմանացի յայտնի մասնագէտները ականջների ցաւերի վրա զբաղծներ են տպում, հրատարակեցաւ բժշկապետ Գ. Քուչարեանցի աշխատութիւնը հետևեալ վերնագրով՝ „Ueber die Entzündung des Mittelohrs bei Neugeborenen und Saüglingen": Այդ աշխատանքը հետևաբար ծագում է պ. Քուչարեանցի առաջին, աշխատութիւնից որ նա ներկայացրեց 1872 թւին Մոսկվայի համալսարանին, իբրև բժշկապետութեան գիտութիւն և որի մասին կար տեղեկութիւն իր ժամանակին «Մշակի» մէջ։ Հեղինակը ունենալով իր ձեռքի տակ առաջին քանակութեամբ նիւթ քննութեան համար և վերաքննելով իր ստացած հետևանքները Գերմանիայի յայտնի պրոֆէսորների մօտ, ահա ինչ եզրակացութեանն է գալիս։ Քննութեան նիւթ եղել են ականջներ 300 ից աւելի մեռած երեխաների։ ա) Դրածին երեխայի ականջի միջին մասը ոչ մի հիւթով լի չէ, ինչպէս մինչև այժմ կարծում էին, այլ ընդհակառակն դատարկ է և պատրաստ բոլորովին ընդունելու իր մէջ օդ, որ անպայման և մտնում է ականջի մէջ շնչառութեան գործողութիւնը սկսվելիս։ բ) Ականջի այդ միջին մասը ծածկված է ոչ թէ փափուկ և հաստ գործուածով, ինչպէս կարծում էին, այլ ընդհակառակն մի շատ բարակ փառով, ինչպիսի է բերանի միջին կողմի ծածկված նուրբ մաշկին։ գ) Անտանելի յաճախ է պատահում բորբոքումն ականջի այդ միջին մասի մէջ, այն հիւանդ երեխաների մօտ, որք մեռնում են զանազան ցաւերից, այնպէս որ 300 երեխաների ականջներից որք ենթարկվել են քննութեան, միայն 40 երեխայի ականջները եղել են առողջ դրութեան մէջ, իսկ մնացած 260 երեխաների երկու ականջներն էլ ենթարկված են եղել բորբոքման, կամ ամբողջին վէրքերի (քոյքայման), լի են եղել թարախով և շատ անգամ հոտած արիւնով։ Չը նայելով այսպիսի ահալի և համաբոլոր մշտական ականջի ցաւի մնալուն երեխաների միւս հիւանդութեանց հետ, մինչև այժմ անկարելի է ճանաչել այդ ցաւի ներկայութիւնը երեխայի կենդանութեան ժամանակ, այնպէս որ տարաբաղդաբար այժմեան բժշկականութիւնը դեռ ևս անզօր է օգնել հիւանդին և բժշկել ցաւը։ Նոյնպէս հետազօտութիւնը ցոյց տուեց, որ այն երեխաները, որք մեռնում են ծաղիկից, կարմրուկից և առ հասարակ սոցա նման փոխանցական ցաւերից, միշտ ենթարկված են լինում միջին ականջի ցաւերին, որի մասին հեղինակը դեռ հաղորդել է 1872 թւին Մոսկվայի բժշկական ընկերութեանը։ Ինչ է պատճառը այդ ցաւի և թէ ինչ եզրակացութեան է հասնում հեղինակը.—այդ մեզ շատ հեռու կը տանէր և կը դարձնէր մեր տուած տեղեկութիւնները բոլորովին մասնագիտական։

«Մշակի» ներկայ համարի հետ ուղարկում ենք մեր բաժանորդներին „Тифлисск. Вѣстн." լրագրի յայտարարութիւնը։

***

Մենք առիթ ունեցանք ծանօթանալ տիկին Կարլա Սերէնայի հետ, որի մասին անցեալ համարում մի երկու խօսք ասած ենք։ Տիկինը ճանապարհորդել է ամբողջ Եւրոպայում և բազմաթիւ գրվածներ ունի, թէ առանձին գրքերով հրատարակված, թէ զանազան լրագիրներում յօդվածների ձևով տպված։ Տիկին Սերէնայի ոճը թեթև, գուրեկան նկարագրական ոճ է։ Մեզ աջողվեցաւ կարդալ նորա Թիֆլիսում քանի մի շաբաթվայ ներկայութեան ժամանակ գրած սուր և ճիշդ դատողութիւններով լի նամակներ մեր քաղաքի դրութեան և քաղաքիս այլ և այլ ազգաբնակութեան կեանքի վերաբերութեամբ։

***

Կիրակի երեկոյեան, յունվարի 25-ին Թիֆլիսի Միքայէլեան կամուրջի վրա պատահեց հրդեհ։ Այրվեցաւ պ. Սուլիկօվի թղթերի և գրելու իրեղէնների խանութը։ Հրդեհը շուտով հանգցրին, բայց ապրանքներ բոլորովին այրվեցան։

***

Վրաց «Դրօէբա» լրագիրը լսել է որ դիտաւորութիւն կայ հիմնել Թիֆլիսում բնագէտների մի ընկերութիւն։

***

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՒ ԾՆՆԴԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ։ Ծննդական կանանց ընդունելութիւնը օրվայ և գիշերվայ ամենայն ժամանակ։ Ծննդականների համար հիւանդանոցում, բացի հասարակաց դահլիճներից, որտեղ ծննդականները ապրուստ և բժշկութեան համար վճարում են 50 կոպէկ օրը, իսկ չքաւորները ձրիաբար են պահվում և բժշկվում, —կան նաև առանձին զատուի սենեակներ, 30 մինչև 50 րուբլ ամսական վճարով։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, խորհրդի և դեղի համար 30 կոպէկ վճարով։ Ընդունելը հերթապէս։

Ամեն օր. 8 ժամից մինչև $9^1/_2$ առաւօտեան, —դօկտօր Երամիշեվ, $9^1/_2$ ժամից մինչև 11 ժամ առաւօտեան, —դօկտօր Անանով։

Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11 ժամից առաւօտեան մինչև 12 ժամ, —դօկտօր Ըլբանուս և դօկտօր Կապպելէր։

Չորեքշաբթի օրերը, 12 ժամին կէսօրի՝ կօնսուլտացիա դօկտօրների՝ Րէմմէրտ, Ըլբանուս, Անանով և Երամիշեվ։

Մի ԿՏՈՐ ԴԵՏԻՆ ծախվում է ՍՕԼՕԼԱԿՈՒՄ։ Պայմանների մասին տեղեկանալ գեներալ-մայորի այրի Աննա Արիստակեան ԴՈՐԴԱՆԵԱՆՑԻՑ Սօլօլակում իր սեփական տանը, պարսից կօնսուլի տան հանդէպ։ 2 (3)

Մի ԲԷԼԻՍՏ ցանկանում է պարապել դասերով և դասերի կրկնութիւններով։ Ցանկացողք կարող են տեղեկանալ պայմանների մասին պ. Համբարձում Էնֆիաճեանցի մագազինում։ 4 (5)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։
ԻՒՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻՔՈՍ ՊԷՇՑԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՑԵՆ ՀԱՑԹԱՑԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պալատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունիմ առաջարկել թէ հասարակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենաւոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մլջիւն, բագլինջ. լու և այլն, ոչնչացնելու համար։ Յիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունիմ վկայաթղթեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվեստեան հանդիսում 1872 թւին մեծ արծաթեայ մեդալի և Վիեննայի աշխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):



ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ գինը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոշին սև ուտիճների, ցեցի մլջիւնների և լուերի դէմ 1 րուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուտապերչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բագլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գիւտաւոր Պէշը։

Հաստատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաշւե կոշտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕՒ մուզիկային մագազինում, Դվօրցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕՒ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։ 2 (50)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վեհափառ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ թոյլ տուած լօտարէյի
յօգուտ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ հիմնարկութիւնների
Կովկասում և Անդրկովկասում,
որք գտնվում են ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ Իշխանուհի ՕԼԳԱ ՖԷՕԴՕՐՕՎՆԱՅԻ
հովանաւորութեան տակ,

ՆՇԱՆԱԿՎՈՒՄ Է

Բաշխելոցն շարթին՝ հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, այսինքն 12, 13 և 14 փետրվարի 1876 թ. առաւօտեան ժամը 11-ից սկսած,
ԹԻՖԼԻՍԻ [illegible] շինութեան մէջ։

Հիմնարկութիւնները և անձինք, որք բարեհաճել են մասնակցել լօտարէյի տոմսակների ծախվելուն և որք մինչև այժմ չեն ներկայացրել այդ մասին լիակատար հաշիւ և սպառված լինում են տիրաժի համար յետաձգութեան պատճառ, հրաւիրվում են հասցնել յիշեալ հաշիւները լօտարէյի մասնաժողովը, փետրվարի 1-ից ոչ աւելի ուշ։

Իսկ տոմսակները, որք անվաճառ մնացին, կարելի է ստանալ մինչև տիրաժի օրը, մօտս հանդիսում։

Տիրաժի (վիճակահանութեան) և հետևեալ օրերը, անձինք, որք տարած կը լինեն շահումներ, կարող են ստանալ այդ շահումները հանդիսից, հենց որ կը ներկայացնեն լօտարէյի տոմսակը։ 3 (3)

ПО ПРИЧИНѢ

МАЛОЧИСЛЕННОСТИ ПОДПИСЧИКОВЪ,

ИЗДАНІЕ ГАЗЕТЫ

„ДОНСКАЯ ПЧЕЛА"

СЪ 1-го ЯНВАРЯ **1876** ГОДА.

оказалось невозможнымъ, вслѣдствіе чего, оставляя таковое до болѣе благопріятнаго времени увѣдомляю объ этомъ всѣхъ, имѣющихъ какія бы то ни было дѣла съ редакціею.

☞ Пріемъ подписки продолжается пока безъ взноса денегъ, а потому покорнѣйше прошу желающихъ подписаться на эту газету, съ требованіями своими заблаговременно обращаться въ контору редакціи „Донская Пчела", дабы возможно было по числу подписчиковъ основать изданіе этой газеты.

Редакторъ-Издатель И. А. Теръ-Абраміанъ.

Магазинъ серебряныхъ вещей „Кристофля" перешелъ съ Сололакской улицы съ 3-го января 1876-го на Гановскую улицу въ домъ Бебутова, выше Коммерческаго Банка. И вновь полученъ большой ассортиментъ разныхъ серебряныхъ вещей.

3 (3) Е. ГЕЙМАННЪ.

Մի կնոջիկ կամենում է պարապել դաստիարակութիւնով կամ դասերի կրկնութիւնով։ Պայմանների մասին կարելի է խնդրել Վորոնցովի փողոցում, Կուկիի կամուրջի վերա։

3 (3)

ИМПЕРАТОРСКОЕ Кавказское Медицинское Общество имѣетъ честь довести до всеобщаго свѣдѣнія, что въ засѣданіи 16-го декабря 1875 года имъ постановлено отчислить изъ запасныхъ суммъ 300 р. на премію за лучшее сочиненіе на тему:

ОПИСАНІЕ РАЗЛИЧНЫХЪ ПОРОДЪ КРУПНАГО И МЕЛКАГО СКОТА, УПОТРЕБЛЯЕМАГО ВЪ ПИЩУ, ИЗЪ ЧИСЛА РАЗВОДИМЫХЪ ВЪ ПРЕДѢЛАХЪ КАВКАЗСКАГО ВОЕННАГО ОКРУГА.

Общество желаетъ, чтобы сочиненіе на эту тему заключало въ себѣ:

1) Изслѣдованія существующихъ на Кавказѣ породъ скота, имѣя въ виду не только, такъ называемый, крупный рогатый скотъ, но также овецъ и свиней. Изслѣдованія эти должны опредѣлить приблизительную рослость породъ и способность ихъ къ откармливанію, а въ отношеніи коровъ и буйволицъ степень ихъ молочности. Къ этому же отдѣлу изслѣдованій должно быть отнесено критическое разсмотрѣніе способовъ кормленія скота во всѣ времена года, а также описаніе наиболѣе часто господствующихъ въ краѣ эпизоотическихъ болѣзней.

2) Изслѣдованія способовъ выбора и подготовленія скота къ убою, способовъ самаго убоя и способовъ сохраненія мяса послѣ убоя.

Условія конкурса на соисканіе этой преміи слѣдующія:

А. Сочиненія должны быть представлены Обществу не позже 1-го октября 1876 года, присужденіе же преміи и объявленіе имени удостоившагося автора будетъ въ годичномъ торжественномъ засѣданіи 5-го апрѣля 1877 года.

Б. Сочиненія должны быть представлены подъ особеннымъ девизомъ, который также пишется на прилагаемомъ при сочиненіи, отдѣльномъ, запечатанномъ конвертѣ, заключающемъ имя автора. По присужденіи преміи, конвертъ вскрывается въ годичномъ торжественномъ засѣданіи.

В. Сочиненіе будетъ разсматриваться особенною коммисіею, избираемою Обществомъ путемъ закрытой баллотировки.

Г. Сочиненіе удостоенное преміи будетъ помѣщено въ Медицинскомъ Сборникѣ, издаваемомъ Обществомъ, автору же будутъ выданы 50 отдѣльныхъ оттисковъ сочиненія. Кромѣ того, по усмотрѣнію Общества, сочиненіе можетъ быть печатаемо въ мѣстныхъ русскихъ, а въ переводѣ и въ туземныхъ газетахъ, а также издано отдѣльными брошюрами на русскомъ и на туземныхъ языкахъ.

Д. Сочиненія неудостоенныя преміи остаются въ Обществѣ до востребованія, безъ вскрытія конвертовъ, заключающихъ въ себѣ фамиліи авторовъ.

Е. Авторы сочиненій, неудостоенныхъ преміею, не имѣютъ права требовать отъ Общества отчета о причинахъ, побудившихъ его къ отказу.

Дозволено цензурою 28 Января 1876 г. Тифлисъ

Типографія Меликова

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ